



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 261 – Ա

25 սեպտեմբերի 2017 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.13-րդ կետերի դրույթներով

կարգադրում եմ

1. Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով հատկացված ֆինանսական միջոցներով ՀՀ Գեղարքունիքի մարզում կառուցված ու հիմնանորոգված օբյեկտների ավարտված շինարարական աշխատանքներն ընդունելու համար ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

- | | |
|-------------------|---|
| Չոհրաբյան Արմեն | - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ, նախագահ |
| Խլոյան Արա | - մարզպետի խորհրդական |
| Խաչատրյան Գևորգ | - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ |
| Կարապետյան Սուրեն | - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի վարիչ |
| Մելքոնյան Գուրգեն | - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխ.մասնագետ |

Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի քաղաքաշինական պետական տեսչության Գեղարքունիքի տարածքային բաժնի, համապատասխան օբյեկտների տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող, կապալառու և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներին:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ